պատճառով։ Այդ կէս դարվայ ընթացքում Բելգիան խաղաղ ճանապարհով կարողացաւ պատուաւոր տեղ ստանալ եւրոպական ժողովուրդների ընտանիքի մէջ։ Բելգիական ազգային այդ տօնը, որ նուիրված է ժողովուրդի նիւթական և բարոյական խաղաղ առաջադիմութեան յիշատակներին, նշանակութիւն ունի ոչ թէ միայն Բելգիայի համար, ոչ թէ միայն իւրաքանչիւր ազգի և պետութեան համար, որ հասնում է պատմական փոքրիկ նշանակութիւնը և որ անհրաժեշտութիւն է զգում անցեալի օրինակներից օգուտ քաղել, այլ ամբողջ աշխարհի համար։ Դա ազատութեան տօն է, որ ամբողջ աշխարհի համար թանգագին է։

Բելգիան մի փոքրիկ պետութիւն է և շրջապատված է այնպիսի տարերով, որոնք պարծում են յաջող դէպքին վերջ դնել, նրա անկախ գոյութեանը և որոնց դէմ նա միայն 100,000 զինուոր կարող է դուրս բերել։ Այդ փոքրիկ Բելգիան հսկայական քայլերով առաջ է գնում նիւթական և բարոյական բարօրութեան ճանապարհի վրա։

Ինչի՞ մէջն է ծածկված այդ մշտական զարգացման գաղտնիքը։ Ինչի՞ մէջն է այն գաղտնիքը, որ ահագին քանակութեամբ զօրքեր ունեցող եւրոպական ոչ մի պետութիւն չէ համձակվում ձեռնամուխ լինել Թագաւոր Բելգիայի անկախութեանը։

Այդ գաղտնիքը ժողովրդական մտաւոր ոյժերի զարգացումն է և այդ ժողովրդի գիտակցական պետական կեանքն է։

1815 թուականին Վիէննայի դաշնագրի հիման վրա, երբ նահանգ Հոլանդիայի հետ միացրած, Բելգիան 15 տարիների ընթացքում համբերում էր միջազգային այդ անիրաւութեամբ իր վրա դրած անտանելի լուծը։ Հոլանդիայի թագաւորը ոչ թէ միայն ոչինչ չը գործեց բելգիացիներին իրանց անտանելի դրութեան հետ հաշուեցնելու համար, այլ ընդհակառակը աւելի էլ աստիճանցրեց նրանց թշնամութիւնը դէպի Հոլանդացիք։ Բելգիան չը կարողացաւ հաշտվել Հոլանդիայի տիրապետութեան հետ։ Ժամանակը և լաւ կառավարութիւնը զուցէ մի ժամանակ անհետացնէին այդ թշնամութիւնը, բայց Հոլանդիայի թագաւորը չը կամեցաւ սպասել ժամանակի բնական ընթացքին։ Նա բացարձակ ոյժը աւելի լաւ համարեց և բելգիացիք միշտ զգում էին այդ ոյժի ծնշումը։ Ամբողջ վարչութիւնը Հոլանդացիների ձեռքին էր, Բելգիայի բոլոր շահերը զոհվեցան Հոլանդիայի շահերին։ Հոլանդիայի պարաքերի մեծ մասը Բելգիայի վրա դրվեցաւ և ամենանեղակայելի սահմանագրութիւնը որոշում էր բելգիացիների յարաբերութիւնը դէպի Հոլանդիայի թագաւորը։

Այսպիսի դժուար դրութեան մէջ էր Բելգիան, երբ 1830 թուականի Ֆրանսիական յեղափոխութիւնը Ֆրանսիական գահի վրա Լիւդովիկ-Ֆիլիպին բարձրացրեց։ Նոր թագաւորի ազատամիտ անունը կենդանացրեց բելգիացիների յոյսերը։

Կղերական և ազատամիտ կուսակցութիւնների կռիւները Բելգիայի պատմական պատմութիւն էին կազմում և ներքին երկպառակութեան պատճառ էին դառնում։ Կաթոլիկ ուժեղ կուսակցութիւնը միշտ կարողանում է հաշվել իւրաքանչիւր կառավարութեան հետ, եթէ նա չէ խլում այդ կուսակցութեան արտօնութիւնները։ Հոգեւոր ուսումնարանների փակելը, հոգեւորականների հալածելը, որոնք չէին կամենում երդվել Հոլանդիայի թագաւորին, իւրաքանչիւր կառավարութեան հետ, մշտապէս ազատամիտներին, մի կողմից, ոգեւորում էին նրանց դէպի ազատութիւնը, չը նայելով հոգ Նասլէնսկի III-ի սպառնալիքներին, որ պահանջում էր յետ տալ Ֆրանսիային Փակեն եղբայրներին, որոնք Նասլէնսկի կեանքին ձեռնամուխ էին եղել։ Գերմանիայի այդպիսի փորձերն էլ 1875 թուականին անպտուղ անցան։

Բելգիական ժամեան ազատամիտ կառավարութիւնը իշխանութիւն ստացաւ 1878 թ. յուլիսի 20-ին և մեծ հեղինակութիւն ունէր։ Կառավարութենից պաշտպանված ազատ խօսքը և մամուլը անշնորհակալ չը գտնվեցան դէպի իրանց հովանաւորող երկիրը։ Եւրոպայում սերմանված անկարգութիւնները և շփոթները, անիշխանութեան և կոմունայի վարդապետութիւնները չը քարոզվեցան Բելգիայի մէջ, նոյն Բելգիայի մէջ, որտեղ նրանք կարող էին բոլոր միւս երկիրներից աւելի ազատ հնչվել և չը պատժվել։

Մամուլի ազատութիւնը նիւթականապէս թոյլ Բելգիայի բարոյական ոյժի աղբիւրներից մէկն է։ Միւս աղբիւրները՝ ժողովրդական կրթութեան ահագին զարգացումն է։

1848 թուին Բելգիայի ազգային ուսումնարանների մէջ սովորում էին 450,000 երեխաներ և 190,000 հասակաւորներ, 1870 թուականին առաջինների թիւը 600,000-ի, իսկ երկրորդների թիւը 217,000 հասաւ։ Այժմ այդ թուանշանները աւելի էլ բարձրացել են։ Ամբողջ ազգաբնակութենից կարդալ և գրել գիտեցողները 80% են կազմում։ Ժողովրդական լուսաւորութեան համար արած ծախսերի շատանալը ակներև է դարձնում նրա զարգացման աստիճանը։ 1876 թուականի բիւդժեի համեմատ որոշված էր ժողովրդական լուսաւորութեան համար 8,197,000 ֆրանկ ծախսել, նոյն նպատակի համար 1879 թուականի բիւդժեը որոշում է 14,254,599 ֆրանկ։ Երեք տարվայ ընթացքում կրթութեան համար արած ծախսերի քանակութիւնը 6,057,599 ֆր. շատացաւ։ գրեթէ երկու անգամ։

Ինչպիսի բարկութեամբ և նախանձով պէտք է նայեն այժմ այդ փոքր պետութեան առաջադիմութեան վրա այն մարդիկ, որոնք պետական հանգստութեան գրականը ժողովրդի ազատութիւնն են համարում։ Դատողութիւններին նրանք պատասխանում էին, բայց ակներև օրինակին անկարելի է պատասխանել։ Նոյն իսկ այդ մարդիկ, խաւարի և սարկութեան այդ պաշտպանները Բելգիային կորուստ էին նախագուշակում, որովհետև նա աւելի լաւ համարց լոյսը, քան թէ խաւարը, ազատութիւնը, քան թէ շղթաները և սարկութիւնը։ Այսպիսի օրինակի առաջ խաւարի այդ պաշտպանները պէտք է լռեն։

Բելգիական ժողովուրդը հպարտութեամբ կարող է ծանել իր անկախութեան 50 ամեայ յոբելեանի հանդէսը, որովհետև նա խաղաղ յաղթութիւն է մարդկային մտքի և ոգու, կոպիտ ոյժի դէմ, ճշմարտութեան, դարևոր նախապաշարմունքի դէմ, օրինաւորութեան՝ կամայականութեան դէմ։ Ցանկանանք այդ աշխատող ժողովրդին նոր աջողութիւններ իր ազատ կեանքի ասպարէզի վրա։ Նրա աշխատանքները և օրինակը առանց հետեւանքի չեն մնայ մարդկութեան համար։

ՆԱՄԱԿ ԱԼԵՍՏՐԻԱՑԻՑ

—

Վիէննա, 6|18 յուլիսի

Այսօր Ալեսարիայի մայրաքաղաքում կատարվեցաւ եւրոպայի ազգերի ժողովի ընդհանուր հանդէսը, որին ներկայ էին մինչև 12.000 որսորդներ։ Լրագիրներում քանի մի ամիս առաջ հրատարակված էր այդ ժողովի մասին և նշանակված օրը համարեա բոլորը ներկայ էին։ Քաղաքի բոլոր փողոցները զարդարված էին գունագոյն դրօշակներով, ամեն տեղ երեսում էր ընդհանուր ուրախութիւն և ոգեւորութիւն։ Այն փողոցի վրա, որտեղից պիտի անցնէր հանդէսը, վաղ առաւօտից երկու կարգ զինուորներ էին կանգնեցրած։

Հանդէսը սկսվեց 10 ժամին։ Առաջ անցաւ հրաշէջների գունդը իր դրօշակներով և առանձին եւրոպացիների խմբով։ Նրանցից յետոյ անցան կայսրի օտարոտիները և եղբայրը բոլոր պալատականներով։

Ամբողջ քաղաքը թնդաց կեցցէների ձայներով։ Յետոյ մին միւսից յետոյ անցան ամեն երկիրների որսորդները իրանց դրօշակներով և իրանց հետ բերած երաժշտական խմբերով։

Բոլորից բազմաթիւ և գեղեցիկ հագուստներով ու տեսքով էին չվեղացի որսորդները, որանց ժողովուրդը մեծ համակրութեամբ ընդունեց։ Շատերը ժողովրդից իրանց գլխարկներն ու թաշկինակները կորցրին։ Ոչ սակաւ գրաւիչ էին տիրոլցի որսորդները իրանց զոյնզգոյն հագուստներով։ Բոլորից յետոյ անցան առհասարակ Ասարիայի և մասնաւորապէս Վիէննայի որսորդները հերցոգ Ալբրէխտի և իր ամուսնու առաջնորդութեամբ։ Ժողովրդի զոռում և գոչումը չափ և սահման չունէր։ Վերջապէս անցան քաղաքային վարչութեան ներկայացուցիչները։

Հանդէսը գումարվեցաւ մի մեծ հրապարակի վրա Ֆրանց-Յովսէփի անունով կառուցված զօրանոցի հանդէպ։ Ցան բոլոր յետոյ յայտնվեցաւ կայսրը Նորին մեծութեան կայսրուհու հետ։ Ժողովուրդը մեծ բերկրութեամբ ընդունեց իր թագաւորին։

Այն ժամանակ տասն և երկու հազար որսորդները գունդ գունդ դիմեցին քաղաքից դուրս մի մեծ դաշտի վրա և այնտեղ սկսեցին զանազան որսորդական փորձեր և հրաձգութիւններ անել։ Որսորդների ճարպիկութիւնը և նրանց յաջողութիւնները Նայոդների վրա զարմանք էին ազդում։ Ամենաաջողակները ստացան թանգագին մրցանակներ, որ պատրաստել էր Վիէննայի քաղաքային զանձարանը։ Դրանից յետոյ տրվեցաւ փառաւոր և մեծամանդէս ճաշ, որտեղ հրաւիրված էին Վիէննայի զինուորական և քաղաքական ստաստիճանաւորներ։

Ինձ զարմացրեց այն, որ ես չը տեսայ այդ զանազան երկիրներից եկած որսորդների թւում Ռուսաստանի որսորդների ներկայացուցիչներից ոչ մին։ Մի գերմանացի ինձ ասեց, այդ այն պատճառով է, որ ռուսները չունեն որսորդական կազմակերպված ընկերութիւններ, ուրեմն չունեն և հմուտ որսորդներ։

Այդպիսի հանդէսներ կրկնվում են տասն և երկու տարի մի անգամ Եւրոպայի այլ և այլ մայրաքաղաքների և մեծ քաղաքների մէջ։ Աւելորդ չեմ համարում ասել, որ յիշեալ հանդիսին ներկայացել էին որսորդներ մինչև անգամ Ամերիկայի Մէրցեալ Նահանգներից և Ամերիկայի միւս հանրապետութիւններից։

Սիրտս արիւնով լցվում էր երբ մտածում էի որ խեղճ հայի անունը երբէք չէ յիշվում այս տեսակ համաշխարհային հանդէսներում։ Արդեօք ինչ բանի մէջ պէտք է յայտնվի հայ մարդը։

Հ. Աբովեանց

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ՎԻԷՆՆԱ, 13 յուլիսի։ Բ. Դրան պատասխանը պետութիւնների դրութեանը երկկ ուղարկվեցաւ։ Բ. Դուռը մերժում է Բերլինի կոնֆերենցիայի որոշած սահմանը, հաստատելու է բանակցութիւններ սկսել սահմանները ուղղելու մասին, բացառելով Նանինա, Մեցեվօ և Լարիսսա։

ՓԱՐԻԶ, 14 յուլիսի։ «Rappel» լրագիրը հաղորդում է իբրև լուր, որ Վիկտորիա թագուհին մի նամակով խորհուրդ է տուել սուլթանին ընդունել Բերլինի կոնֆերենցիայի վճիռը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 յուլիսի։ Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէք 94 ր. 12 կ., երկրորդ 91 ր. 87 կ., երրորդ 93 ր. 50 կ., չորրորդ 93 ր. 12 կ., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէք 223 ր. 50 կ., երկրորդ 222 ր. 75 կ., աբրեկեան առաջին փոխառութեան տոմսակը արժէք 91 ր., երկրորդ 91 ր., երրորդ 90 ր., 75 կ., ոսկի 7 ր. 83 կ.։ Ռուսաց 1 բուլ Լանդոնի վրա արժէք 25⅓ պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէք 214 մարկ, Փարիզի վրա 267 ֆր.75 սանտիմ։ Բորսայի տրամադրութիւնը հանգիստ է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՇՈՒՆԻ